



Ի.Ս.ՏՈՒՐԳԵՆԵԿ

# ՄՈՒՄՈՒ

891.710  
Տ-96

ՀԱՅԴԵՏՀՐԱՏ



891.71  
5-96

Ի. Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ,

2011-05

# Մ Ո Ւ Մ Ո Ւ

Թարգմ. ՍՏ. ՋՈՐՅԱՆ

Z U S M E S Z P U S

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԻՆ  
1940





1863

40

И. С. ТУРГЕНЕВ  
МУМУ

Арм. Гиз, ССР, Ереван, 1940 г.

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում՝ սպիտակ սյու-  
ներով և ծոված պատշգամբով մի գորշ տան մեջ ապրում  
եր. յերբեմն մի ագնավական սյրի կին՝ բազմաթիվ ճորտ ծա-  
ռաներով շրջապատված: Նրա վորդիները ծառայում էին  
Պետերբուրգում, աղջիկներն ամուսնացել էին: Նա շատ սա-  
կավ եր յերևում հասարակության շրջաններում և իր ժլատ  
ու ախուր ծերության տարիներն անց եր կացնում առանձ-  
նության մեջ: Նրա կյանքի անուրախ ու մռայլ ցերեկը  
վաղուց եր անցել, բայց նրա յերեկոն ել գիշերից խավար եր:

Նրա ծառայողների մեջ ամենից աչքի ընկնողը դռնա-  
պան Գերասիմն եր՝ բարձրահասակ ու վեթխարի մի տղա-  
մարդ, վոր ի ծնե խուլ ու համր եր: Տիրուհին նրան բերել  
եր գյուղից, ու նա մեն-մենակ, յեղբայրներից բաժան՝  
ապրում եր մի փոքրիկ խրճիթում: Անսովոր ուժի աեր՝ նա  
չորս մարդի բան եր անում մենակ: Տեսնողը հաճույք եր  
զգում, թե ինչպես ե նա վարում, հնձում, կալում: Մշտա-  
կան լռությունը, առանձին հանդիսավորություն եր տալիս  
նրա աշխատանքին: Նա յերեկոն ունչալար եր և, յեթե նրա  
դժբախտությունը չլիներ—ամեն մի աղջիկ սիրով կառներ  
նրան: Բայց ահա Գերասիմին բերին Մոսկվա, յերկա, աճիտ  
կոշիկներ առան, ամառվա համար կաֆտան կարեցին,  
ձմեռվա համար քուրք, ձեռը բահ ու ավել տվին և դռնա-  
պան կարգեցին:

Հենց սկզբից իր նոր կյանքը բնավ դուր չեկավ նրան  
Մանկությունից նա սովոր եր դաշտային աշխատանքի ու  
գյուղական կյանքի: Տեղափոխվելով քաղաք նա չեր հաս-



կանուս ինչ եր կատարվում հետը, ճանձրանում եր և տարա-  
կուսում այնպես, ինչպես տարակուսում ե մի արջար, վո-  
բին հանկարծ կանաչ թարմ խոտից կտրելով վերցնում են  
ու զնում յերկաթուղու վագոնը և շխկոցով ու թրխկոցով  
սանում, թե ուր—հայտնի չե: Իր նոր գործը, գյուղական  
ծանր աշխատանքից հետո, Գերասիմին խաղ ու պար եր  
թվում. կես ժամում նա ամեն ինչ վերջացնում եր ու բախի  
մեջտեղը կազնում և բերանաբաց նայում անց ու դարձ  
անող մարդկանց, կամենալով կարծես իմանալ իր անհա-  
կանալի կյանքի բացատրությունը, կամ թե չե քաշվում  
եր վորևե անկյուն և, թին ու ավելը հեռուն շարտելով,  
յերեսնիվայր ընկնում գետին և ժամերով անշարժ պառկում  
կրծքի վրա, ինչպես գերված մի գազան: Բայց մարդն ընտե-  
լանում ե ամեն բանի, և Գերասիմն ել, վեր՝ ի վերջո, ընտե-  
լացավ քաղաքի կյանքին: Գործը մեծ չեր. նրա պարտա-  
կանությունն այն եր, վոր բաղը մաքուր պահի, որական  
յերկու անգամ տակառով շուր բերի, փայտ կտրի և ջարդի  
խոհանոցի ու տան համար, ոտար մարդիկ չթողնի և գիշեր-  
ները պահապան կանգնի: Յեվ, պետք ե ասած, նա իր պարտա-  
կանությունը յեռանդով կատարում եր: Յերբեք բախում  
չեյիր տեսնի չոփի մի կտոր կամ թափված աղբ: Յեխ ժա-  
մանակ, յերբ ձին չկարողանար ջրի տակառը հանել մի վո-  
րևե ցեխ տեղից, բավական եր միայն, վոր Գերասիմն ուսով  
հրեր, վոչ միայն տակառի սայլակը, ձին ինքն ել եր ծու-  
լինում տեղից, կամ յերբ սկսում եր փայտ ջարդել, կա-  
ցինը նրա ձեռքին գրնգում եր ապակու պես և տաշեղներն  
ու փայտի կտորտանքը թռչում եյին ամեն կողմ. իսկ ինչ  
վերաբերում ե գողերին, դա արդեն այն բանից հետո,  
յերբ մի անգամ գիշերը, յերկու գող բռնելով՝ նրանց ճա-  
կատները խփել եր իրար, այնպես եր խփել, վոր հետո  
նրանց թեկուզ վոստիկանատուն չտաներ ել, թաղում բո-  
լորն սկսեցին հարգել նրան, մինչև անգամ ցերեկվա անցորդ-

ները, արդեն վոչ թե գողեր, այլ պարզապես անձանոթ  
մարդիկ, ահարկու գոնապանին տեսնելիս, հեռու եյին  
անցնում:

Տան մյուս սպասավորների հետ Գերասիմը վոչ թե բա-  
րեկամական, այլ մոտիկ հարաբերություն մեջ եր. նա դրանց  
համարում եր յուրայիններ: Նրանք Գերասիմի հետ բացա-  
տրվում եյին նշաններով, և Գերասիմը նրանց հասկանում  
եր, ճշտությունը կատարում եր նրանց բոլոր հրամանները,  
բայց իր իրավունքները նույնպես գիտեր. վոչ-վոք ծառա-  
յողներից չեր համարձակվի նստել նրա տեղը՝ սեղանի շուրջը:  
Գերասիմն առհասարակ խիստ և լուրջ բնավորություն ու-  
ներ. նա ամեն բանում կարգ եր սիրում. մինչև անգամ  
աքաղաղները նրա ներկայությունը չեյին համարձակվում  
կռվել, ալլապես վայ նրանց: Տեսներ թե չե, իսկույն յեր-  
կուսի վոաքերից ել կրճեր, մի քանի անգամ անիվի պես  
կպտտեր ու կզարտեր յուրաքանչյուրին մի կողմ: Տիրուհու  
բախում կային և սագեր, բայց սագը հայտնի չե, վոր լուրջ ու  
խոհեմ թռչուն ե: Գերասիմը նրանց վերաբերվում եր հարգան-  
քով, հետևում եր, կերակրում: Նրան տվել եյին մի խուց,  
վոր գտնվում եր խոհանոցի գլխին: Այդտեղ նա իր համար  
իր ճաշակով կաղնի տախտակներից շինել եր չորսվոտանի  
մի տախտ, իսկական հսկայի մի տախտ, վոր չեթե հարյուր  
փութ բան դնելի վրան, չեր ճկվի: Տախտի տակ գտնվում  
եր մի պինդ սնդուկ, անկյունում դրված եր նույնպես  
սեղան, իսկ սեղանի կողքին մի յեռոտանի նստարան:  
Գերասիմն իր խուցը փակում եր կողպեքով և բանալին կա-  
խում գոտուց: Չեր սիրում վոր մոտը մարդիկ գնան-գան:

Այսպես անցավ մի տարի: Յեվ այդ տարվա վերջում  
Գերասիմին պատահեց մի փոքրիկ դեպք:

Պառավ տիրուհին, վորի մոտ նա գոնապանություն  
չր անում, ամեն բանում հետևում եր հին սովորություն-  
ներին և պահում եր բազմաթիվ սպասավորներ, նրա տանը



կարին վոչ միայն լվացարարուհիներ, կար անողներ, հյուաններ, բեռձակներ ու դերձակուհիներ. կար մինչև իսկ ձիու սարք կարող. նույն այդ մարդը համարվում էր անամնաբուժ և սարգկանց բժիշկ, կար և տնային բժիշկ՝ տիրուհու համար. կար վերջապես մի կոշիակար՝ անունը Կապիտոն Կլիմով, սարսափելի հարբեցողի մեկը: Կլիմովը իրեն համարում էր անուշադրուժյան մատնված և ըստ արժանվույն չգնահատված, կրթված և մայրաքաղաքի մարդ, վորն անդործ չպիտի ապրեր Մոսկվայում, ինչ վոր մի խուլ անկյունում, և չեթե խմում էր, ինչպես ինքն էր արտահայտվում ընդհատումներով ու կուրծքը ձեռնելով, խմում էր հենց վշտից: Յե՛վ անա մի անգամ խոսք բացվեց տիրուհու մոտ՝ սպասավորները գլխավոր Գավրիլի հետ, վորին, նրա դեղին, մանրիկ աչքերից ու բաղի բթից դատելով, աստված հենց ինքն էր կարծես վորոշել՝ սպասավորների պես լինելու: Տիրուհին ցավ հայտնեց Կապիտոնի խախտված բարոյականություն վերաբերմամբ, վորին հենց մի որ առաջ գտել էյին վողոցում ընկած:

— Հը, ի՛նչ կասես, Գավրիլ, — խոսեց հանկարծ տիրուհին, — չպսակե՛նք դրան, ի՛նչ ես կարծում: Գուցե խելքի գա:

— Ինչու չե, կարելի յե պսակել, — պատասխանեց Գավրիլը, — և շատ ել լավ կլինի:

— Հա, բայց ո՞վ կառնի նրան:

— Իհարկե: Ասենք, ինչպե՛ս ձեզ հաճելի յե:

— Կարծես, Տատյանան նրան գուր ե գալիս, հը՞:

Գավրիլն ուզում էր առարկել ինչ վոր, բայց շուրթերը սեղմեց:

— Այո... Թող նշանվի Տատյանայի հետ, — վճռեց տիրուհին, բավականությամբ քթախոտ քաշելով, — լսում ես:

— Լսում եմ, — ասաց Գավրիլը ու հեռացավ: Վերադառնալով իր սենյակը, (վորը գրեթե լիքն էր յերկաթափայ սնդուկներով), Գավրիլը նախ գուրս արավ կնոջը և

սպա նստեց լուսամուտի առաջ ու սկսեց մտածել: Տիրուհու անսպասելի կարգադրությունը, ըստ յերևույթին, մտատանջության մեջ զցեց նրան: Վերջապես, նա վեր կացավ ու կարգադրեց Կապիտոնին կանչել: Կապիտոնը յեկավ... Բայց նախ քան սրանց խոսակցությունն ընթերցողին հայտնելը, ավելորդ չենք համարում մի քանի խոսքով պատմել, թե ո՞վ էր այդ Տատյանան, վորի հետ Կապիտոնը պիտի պսակվեր, և ինչու տիրուհու կարգադրությունը շփոթեց Գավրիլին:

Տատյանան, վոր լվացարարուհու պաշտոն ուներ (նրան, վորպես հմուտ և բանիմաց լվացարարուհու, հանձնում էյին նուրբ սպիտակեղենը) քսանութ տարեկան կլին էր՝ փոքր, նիհար, խարոյաշ, ձախ այտի վրա ել խալեր ուներ: Չախ այտին խալ ունենալը Ռուսաստանում համարվում էր վատ նշան, վոր գուշակում է դժբախտ կյանք... Չահել ժամանակը նա վատ էր ապրել. յերկու մարդու բան էր արել և յերբեք փաշիպանք չեր տեսել. հազցնում էյին նրան վատ. ստանում էր ամենաքիչ ոտձիկը. նա համարյա թե ազգական չուներ. Մի ինչ-վոր ծեր մառանապետ, վորին, գործի անընդունակ լինելու պատճառով, թողել էյին գուղում, նրան քեռի էր գալիս, մյուս քեռիներն էլ մուժիկ էյին, — անա բոլորը: Մի ժամանակ նա գեղեցկուհի յեր համարվում, բայց գեղեցկությունը շատ շուտով թռավ նրանից: Նա շատ խոնարհ, կամ, ավելի լավ է ասել, վախեցած քնավորություն տեր էր. իր նկատմամբ միանգամայն անտարբեր էր, ուրիշներից սարսափելի վախենում էր. մտածում էր միայն գործը ժամանակին վերջացնել, յերբեք վոչ վոքի հետ չեր խոսում և զողում էր տիրուհու անունը լսելիս, թեև տիրուհին նրա յերեսը գրեթե չեր տեսնում: Յերբ Գերասիմին գյուղից բերին, նա քիչ մնաց սարսափից ուշաթափվել, նրա վիթխարի կերպարանքը տեսնելով, ու ամեն կերպ աշխատում էր չհանդիպել նրան. պատահում էր նույն-



իսկ իր աչքերը փակում եր նրա կողքով անցնելիս, անից  
լվացքատուն գնալու ժամանակ: Գերասիմն առաջ առանձին  
ուշադրություն չեր դարձնում նրա վրա, հետո սկսեց նրան  
տեսնելիս ծիծաղել—ժպտալ, ապա և նայել սկսեց նրան,  
վերջապես ել սկի աչք չեր հեռացնում նրանից: Տառյանն  
զուր յեկավ նրան, արդյոք զեմքի հեղ արտահայտությամբ,  
թե վեհերոտ շարժումներով—աստված գիտի: Մի անգամ  
Տառյանն անցնում եր բակով, տիրուհու ուլայած կոփ-  
տան չռած մատներով զգուշությամբ բարձր բռնած...  
Հանկարծ ինչ-վոր մեկը պինդ բռնեց նրա արմունկը: Նա  
շուռ յեկավ և ճչաց. յետևը կանգնած եր Գերասիմը: Հի-  
մարի պես ծիծաղելով և քնքշորեն մզզալով՝ նա Տառ-  
յանային մեկնեց շաքարից շինած մի աքլոր, վորի պոչն  
ու թևերը վոսկեգույն էյին: Տառյանն ուզում եր հրա-  
ժարվել, բայց Գերասիմը զոռով աքլորը դրեց նրա ձեռք,  
զլուխն որորեց, հեռացավ և, շուռ գալով, մի անգամ ել  
ինչ վոր սիրալիր բան մզզաց: Այդ որվանից Գերասիմն ել  
նրան հանդիստ չեր տալիս. ուր ել գնար Տառյանն, Գերա-  
սիմը հայտնվում եր այնտեղ, դիմավորում եր նրան, ժրպ-  
տում, մզզում, ձեռները թափահարում, զբալանից հանկարծ  
մի ժապավեն հանում ու նրան տալիս, ավելով մաքրում  
եր փոշին նրա անցնելու ճամբից: Խեղճ աղջիկը ուղղակի  
չգիտեր ինչ անի: Շուտով ամբողջ տունն իմացավ համբ  
զոնապանի արարքները: Սկսեցին հանաքներ ու կատակներ  
անել Տառյանայի հետ: Սակայն բոլորը չեյին համար-  
ձակվում Գերասիմին ծաղրել. նա հանաքներ չեր սիրում. նրա  
ներկայությամբ Տառյանային ել թողնում էյին հանգիստ:  
Գոհ լինեք թե զժգոհ, այնուամենայնիվ Տառյանն անցավ  
նրա հովանավորության տակ: Ինչպես բոլոր խուլ ու համ-  
բերը՝ Գերասիմը շատ շուտ եր գլխի ընկնում և շատ լավ  
եր հասկանում, չերք են ծիծաղում իր կամ Տառյանայի  
վրա: Մի անգամ ճաշից հետո, սպիտակեղենի վրա հսկող  
կինը, Տառյանայի անմիջական մեծը, սկսեց նրան, ինչպես

ասում են, տնազ անել և այն դրության հասցրեց նրան, վոր  
խեղճ Տառյանն չգիտեր ինչ անել, և քիչ մնաց բար-  
կությունից լաց լինեք: Հանկարծ Գերասիմը վեր կացավ,  
մեկնեց իր ահազին ձեռքը, դրեց այն հանդերձապետի գըլ-  
խին ու այնպիսի մոռյլ կատաղությամբ նայեց նրա դեմքին,  
վոր նա կուչ յեկավ և կպավ սեղանին: Բոլորը լուցիին:  
Գերասիմը նորից գդալը ձեռն առավ ու սկսեց ուտել շշին:  
«Տես խուլ անիրավին»,— շնչացին բոլորը, իսկ հանդերձա-  
պետուհին վեր կաթավ ու գնաց աղջկանոցը: Մի ուրիշ ան-  
գամ, նկատելով վոր կապիտոնը, այն իսկ կապիտոնը, վո-  
րի մասին խոսեցինք քիչ առաջ, ինչ-վոր չափից ավելի  
սիրալիր, խոսեց Տառյանայի հետ, Գերասիմը նրան իր մոտ  
կանչեց մատով, տարավ կառքերի սարայը և բռնելով այնտեղ  
անկյունում դրված կառքի լծափայտը, դրանով շատ ազդու-  
կերպով սպառնաց նրան: Այդ որվանից ել վոչ-վոք չեր  
խոսում Տառյանայի հետ: Ճիշտ է, հանդերձապետուհին, հենց  
վոր վագեց մտավ աղջկանոց, իսկույն ուշազնաց յեզավ և  
առհասարակ այնպես վարպետորեն գործ տեսավ, վոր հենց  
նույն սրը տիրուհու ականջը հասցրեց Գերասիմի կոպիտ  
արարքը, բայց տարորինակ պառավը քրքջաց միայն, մի  
քանի անգամ (այդպիսով վիրավորելով հանդերձապետու-  
հուն) ստիպեց նրան կրկնել, թե ինչպես Գերասիմը իր  
ծանր ձեռքով կոացրեց նրան, և մյուս որը Գերասիմին  
մի արծաթ ուրբանոց ուղարկեց: Տիրուհին նրան պար-  
գետարում եր, վորպես հավատարիմ և ուժեղ պահապանի:  
Գերասիմը տիրուհուց շատ վախենում եր, բայց և այն-  
պես հույս ուներ նրա վողորմածությանը և պատրաստվում  
եր արդեն գնալ նրան խնդրելու, թե նա թույլ կտա ար-  
դյոք, վոր ինքն ամուսնանա Տառյանայի հետ: Նա սպա-  
սում եր միայն սպասավորների պետի խոստացած նոր  
կափտանին, վորպեսզի վայելուչ կերպով ներկայանա  
տիրուհուն, չերք հանկարծ այդ իսկ տիրուհին միտք  
հզացավ Տառյանային տալ կապիտոնին:



Այժմ ընթերցողը հեշտությամբ կհասկանա այն շփոթության պատճառը, վոր տիրեց սպասավորների պէտք Գաղբիլին՝ տիրուհու հետ ունեցած զրույցից հետո: «Տիրուհին» — մտածեց նա, լուսամուտի մոտ նստելով, — իհարկե կխոզա Գերասիմին, բայց և այնպէս նա անլեզու բան է. տիրուհուն հո չի կարելի հայտնել թե՛ այ Գերասիմը Տատյանային սիրում է: Յեզ, վերջապէս, ճիշտն ասած, նա ինչ ամուսին կարող է լինել: Իսկ մյուս կողմից, բավական է, վոր, ներքոր տեր, այդ սատանան իմանա, թե Տատյանային Կապիտոնին էն տալիս, նա ամբողջ տունը տակն ու վրա կանի: Չէ՞ վոր նրան ել խոսք հասկացնել չի լինի»...

Կապիտոնի գալը կտրեց Գաղբիլի մաքի թելը: Թեթևամիտ կոշկակարը ներս մտավ, ձեռքերը դրեց յետևը և արձակ-համարձակ պատին հենվելով՝ աջ վտար խաչածեղ զրեց ձախի վրա և գլուխը թափ ավեց: Իբր թե՛ ահա և էս: Ի՞նչ էք ուզում:

Գաղբիլը նայեց Կապիտոնին և մատերով խփեց լուսամուտի շրջանակին: Կապիտոնը փոքր ինչ կկոցեց իր փոքրիկ կապարջ աչքերը, բայց չխոնարհեց, մինչև անգամ ժպտաց թեթևակի և ձեռը տարավ սպիտակավուն մազերին, վորոնք ցցվել էլին այս այն կողմի վրա: Եհ, յես եմ ելի: Ել ի՞նչ էս նայում:

— Լսով էս, — խոսեց Գաղբիլը ու լռեց. — Լսով էս, խոսք չկա:

Կապիտոնը ուսերը թոթվեց միայն: «Իսկ դու չլինի ինձանից լավ էս», մտածեց նա ինքն իրեն:

— Հրա մի քեզ նայիր, մի նայիր հլա, — շարունակեց հանդիմանանքով Գաղբիլը, — հը, եդ ի՞նչ ա քու հալը:

Կապիտոնը հանգիստ նայեց իր մաշված, պատռտված սյուրբուռուկին, իր կարկատած վարտիկին, առանձին ուշազրուցյամբ նայեց իր ծակծկված կոշիկներին, և նորից աչքը գցեց սպասավորների պետի յերեսը:

— Ի՞նչ ա վոր:

— Ի՞նչ, — կրկնեց Գաղբիլը: — Ի՞նչ, դեռ հարցնում ես ինչ: Վոնց վոր սատանա լինես, այ ինչ:

Կապիտոնը աչքերը թարթեց արագ:

«Հայտնեցեք, հայտնեցեք, Գաղբիլ Անդրեյիչ», նորից մտածեց նա ինքն իրեն:

— Դու ելի հարբած էս յեղել, — սկսեց Գաղբիլը, — յեղել էս, չէ: Դե, պատասխանի է:

— Թույլ առողջությանս պատճառով, յենթարկվել եմ, իսկապէս, խմիչքներին, — ասաց Կապիտոնը:

— Թույլ առողջությանս պատճառով... Քեզ քիչ պատիժ են տալիս, — ափսոս: Դեռ Պիտերում ել ուսում է առել... Լավ ուսում էս առել: Չրի հաց էս ուսում միայն:

— Այդ դեպքում, Գաղբիլ Անդրեյիչ, ինձ դատել կարող է միայն սատանա ինքը, և ուրիշ վոչ վոր: Մենակ նա դիտե, թե ինչ մարդ եմ յես և ճիշտ է արդյոք, վոր հացս ձրի յեմ ուտում: Իսկ ինչ վերաբերում է հարբեցողության, այդ դեպքում մեղավորը յես չեմ, այլ ավելի շուտ մի ընկեր. նա ինձ գրավեց ու ինքը հեռացավ, իսկ յես...

— Իսկ դու, թրջված հավի պէս մնացիր փողոցում: Եհ, գլուխդ կորցրած մարդ էս: Բայց բանն եդ չի, — շարունակեց սպասավորների պետը, — այ ինչ կա: Տիրուհին... այստեղ նա լռեց, — տիրուհին ուզում է, վոր դու պսակվես: Լսում էս: Նա կարծում է, վոր դու պսակվելով, խելքի կգաս: Հասկանում էս:

— Ինչո՞ւ չեմ հասկանում:

— Եղպես ուրեմն: Իմ կարծիքով լավ կլինի քեզ մի բուսն մեջ հավաքել: Եհ, դա արդեն տիրուհու գործն է: Հը, ի՞նչ կասես, համաձայն էս:

Կապիտոնը ծիծաղեց:

— Ամուսնությունը լավ բան է մարդու համար, Գաղբիլ Անդրեյիչ. և յես, իմ կողմից, ամենապիտանությամբ:



— Եղպես, ուրեմն,—ասաց Գավրիլը և մտածեց ինքնիրեն, վոր խոսք չկա, լավ ե ասում մարդը:—Միայն թե այ ինչ կա,—շարունակեց նա բարձր,—քեզ համար այնքան ել լավ հարսնացու չեն ընտրել:

— Իսկ ում են ընտրել, թույլ տվեք հետաքրքրվել...

— Տատյանային:

— Տատյանային...

Յեւ կապիտոնը աչքերը չոեց ու հեռացավ պատից

— Հը, ինչո՞ւ հուզվեցիր... Մի՞թե նրան չես հավանում

— Ինչո՞ւ չեմ հավանում, Գավրիլ Անդրեյիչ, նա լավ աղջիկ ե, աշխատող, համեստ... Բայց չե՞ վոր դուք ինքներդ գիտեք, Գավրիլ Անդրեյիչ, վոր են գրողի տարածը, վայրենին՝ Տատյանայի վրա աչք ունի...

— Գիտեմ, ախպերս, բոլորը գիտեմ,—ընդհատեց նրան Գավրիլը վրդով.—բայց չե՞ վոր...

— Բայց ախր, Գավրիլ Անդրեյիչ, նա ինձ կապանի, աստված վկա, ճանճի պես կապանի. նրա ձեռքը, դուք հո տեսել եք, ինչ ձեռք ունի նա. դա ուղղակի հսկայի ձեռք ե: Ինքը խուլ ե, խփում ե ու չի լսում, թե ինչպես ե խփում: Ձեռները թափահարում ե ենպես, կարծես յերազի մեջ լինի և վոչ մի հնար չկա նրան զսպելու: Ինչո՞ւ, վորովհետեւ, ինքներդ գիտեք, Գավրիլ Անդրեյիչ, դա ուղղակի ինչ վոր գազան ե, հրեշ, Գավրիլ Անդրեյիչ, հրեշից ել վատթար... Հիմա նրա ձեռից ինչո՞ւ պիտի տանջվեմ. չե՞ վոր յես ել մարդ եմ:

— Գիտեմ, գիտեմ, լավ...

— Ո, տեր աստված, շարունակեց կոշկակարը տաքացած,—յերբ պիտի վերջանա այս բոլորը: Մա ինչ բախտ ե իմ բախտը: Յերեխա ժամանակս ինձ ձեծում եր գերմանացի տերս, հետո սկսեց իմ հարազատ յեղբայրը, վերջապես, հիմա յել հասած տարիքիս ինչի՞ յեմ արժանանում:

— Ե, հիմարի գլուխ,—ասաց Գավրիլը:—Ի՞նչ ես ավել պակաս խոսում:

— Վհնց թե ինչ, Գավրիլ Անդրեյիչ, յես ձեծիդ չեմ վախում, Գավրիլ Անդրեյիչ: Թող տերս չորս պատի մեջ պատժի ինձ, բայց մարդկանց ներկայութամբ մարդատեղ դնի ինձ, յես ելի մարդկանց շարքում կլինեմ, իսկ այս դեպքում, նա ո՞վ ե, վոր յես նրանից պատիժ կրեմ...

— Դե գնա կորի—առանց շտապելու ընդհատեց նրան Գավրիլը:

Կլիմովը շուռ յեկավ և հեռացավ:

— Բայց ասեսք թե նա չկա,—ձայն տվեց Գավրիլը նրա հետեվից:

— Դու ինքդ համաձայն ես:

— Հայանում եմ իմ համաձայնութունը,—ասաց Կապիտոնը և հեռացավ:

— Նա պերճախոսութունից չեր հրաժարվում անգամ ծայրահեղ դեպքում:

Գավրիլը մի քանի անգամ դնաց-յեկավ սենյակում:

— Դեհ, հիմա կանչեցեք Տատյանային,—խոսեց նա վերջապես:

Մի քանի վայրկյանից սուս ու փուս ներս մտավ Տատյանան և կանգնեց շեղքին:

— Ի՞նչ կհրամայեք, Գավրիլ Անդրեյիչ,—ասաց նա համեստ ձայնով:

Գավրիլն ուշադիր նայեց նրան:

— Հը,—ասաց նա, Տանյուշա, կհուզես մարդու գնալ տիրուհին քեզ համար մարդ ե գո՞ ել:

— Լսում եմ, Գավրիլ Անդրեյիչ: Իսկ ում ե ընտրել տիրուհին ինձ համար,—ավելացրեց Տատյանան անհամարձակ:

— Կլիմովին, կոշկակարին:

— Լսում եմ:



— Նա, ճիշտ է, թեթևամիտ մարդ է, բայց տիրուհին հույս ունի քեզ վրա:

— Լսում եմ:

— Բայց ցավն այն է... չե՞ վոր այդ խուլ համը Գերասիմը քեզ հետևում է: Յե՛վ ինչո՞վ ես դու այդ արջին գրավել: Նա՛ այդ արջը՝ չե՞ վոր կարող է քեզ սպանել:

— Կսպանի... Մենք այդ կտեսնենք: Վա՛նց թե կըսպանի. նա մի՞թե իրավունք ունի քեզ սպանելու, ինքդ դատիր:

— Յես չգիտեմ, Գավրիլ Անդրեյիչ, ունի թե չունի:

— Տես, դու հո նրան ենպես բան չես խոստացել...

— Ի՛նչ էք հրամայում:

Գավրիլը լռեց և մտածմունքի մեջ ընկավ:

— Խեղճ, հնազանդ արարած:— Դե, լավ,— ավելացրեց նա,— մենք դեռ կխոսենք, իսկ առայժմ գնա, Տանյուշա, տեսնում եմ խոնարհ աղջիկ ես:

Տատյանան շուռ յեկավ, թեթևակի հենվեց դռան շրջանակին ու գնաց:

«Եհ, տիրուհին, գուցե, հենց վաղն ել մոռանա այդ պսակի մասին,— մտածեց Գավրիլը,— յես ինչի՞ յեմ անհանգստանում վոր: Իսկ եդ չար Գերասիմին մենք կկռացնենք... յեթե վորձի մի բան անել, վոստիկանության իմաց կտանք»... Ուստի՛նա Ֆեոդորովնա,— կանչեց նա բարձր ձայնով իր կնոջը, սամավարը դիր, սիրելիս...

Տատյանան այդ որն ամբողջ գրեթե դուրս չեկավ լվացքատանից: Սկզբում նա լաց յեղավ, հետո արցունքները սրբեց ու առաջվա պես ձեռնարկեց աշխատանքի: Կապիտոնը մինչև ուշ գիշեր նստեց գինետանը մի ինչ-վոր մռայլ տեսքով ընկերոջ հետ, և մանրամասն պատմում էր նրան, թե ինչպես ինքը Պետերբուրգում ապրում էր մի ազա պարոնի մոտ, վորի ձեռքից ամեն բան կգար, յեթե մի փոքրիկ պակասություն չունենար— խմում էր և կա-

նացի սեռով շատ էր հետաքրքրվում... Մռայլադեմ ընկերը գլխով էր անում միայն, բայց յերբ Կապիտոնը հալանեց, վերջապես, վոր ինքը, մի գիպվածի բերումով, վաղը պետք է իրեն սպանի, մռայլադեմ ընկերը նկատեց, թե քնելու ժամանակ է: Յե՛վ նոանք լուռ բաժանվեցին իրարից:

Այն ինչ՝ Գավրիլի սպառնալիքները չարդարացան: Տիրուհուն այնպես էր զբաղեցնում Կապիտոնին պսակելու միտքը, վոր նա գիշերը նույնիսկ միայն դրա մասին էր խոսում տանն ապրող կանանցից մեկի հետ, վորին պահում էր հատկապես նրա համար, վոր անքնության դեպքերում հետը խոսի, և վորը գիշերային կառապանի պես ցերեկն էր քնում: Յերբ Գավրիլը թեյից հետո մտավ տիրուհու մոտ գեկուցելու, տիրուհու առաջին հարցը յեղավ.— Հը՞, ինչպես է, հարսանիքը գլուխ է գալի՞ս: Գավրիլը պարզ է, պատասխանեց, վոր բանս ավելի քան հաջող է դնում, և վոր Կապիտոնը այսոր և յեթ կգա տիրուհուն շնորհակալություն հայտնելու: Տիրուհին իրեն մի տեսակ լավ չեք գգում, և յերկար չզբաղվեց գործերով: Գավրիլը վերադարձավ իր սենյակը և մի խորհրդակցություն հիրավրեց: Գործն, իսկապես, պահանջում էր հատուկ խորհրդակցություն: Տատյանան հակառակ չեք, իհարկե, բայց Կապիտոնը հայտարարում էր ի լուր ամենքի, վոր ինքը մի գլուխ ունի, և վոչ թե յերկու կամ յերեք... Գերասիմը խստորեն ու արագ նայում էր բոլորին, չեք հեռանում աղջկանցի դռնից և թվում էր գլխի յե ընկնում վոր ինչ-վոր բան է պատրաստվում իրեն ի վնաս: Ժողովականները (դրանց թվում էր և ծեր բուֆետպանը, վորին քեռի Խվաստ էյին առում և վորից բոլորը հարգանքով խորհուրդ էյին հարցնում, թեև նրանից միայն այս էյին լսում.— «այ թե ինչ» կամ՝ «այո, այո, այո») սկսեցին նրանից, վոր համեսայն դեպս վտանգից ապահով լինելու համար, Կապիտոնին փակեցին մի մութ սենյակում ու սկսեցին միտք անել: Ուժի գլմելը հեշտ էր, իհարկե, բայց աստված վոչ անի, աղմուկ բարձրանար, տիրուհին կանհանգստա-



նար—այդ եր վտանգը: Ինչպես անել: Միտք արին, միտք արին, և վորոշեցին վերջապես: Բաղմիցս նկատված եր, վոր Գերասիմը հարբածներին տանել չեր կարողանում... Տան առաջին նստած՝ նա ամեն անգամ յերեսը շրջում եր զզվանքով, յերբ կողքից յերերուն քայլերով ու գլխարկի պահպանակը (կազիրոկը) ականջին թեքած, անցնում եր հարբած մարդու մեկը: Վորոշեցին Տատյանային սովորեցնել, վոր նա հարբած ձեվանա և յերերկրով-որորվելով անցնի Գերասիմի մոտով: Խեղճ աղջիկը յերկար չեր համաձայնվում, բայց համոզեցին. Տատյանան ինքն ել տեսնում եր, վոր իր յերկրրպագու ից այլ կերպ չի կարող ազատվել: Ու գնաց: Կապիտոնին բաց թողին. բանը այնուամենայնիվ նրան եր վերաբերում: Գերասիմը նստած եր տան սուտրի առաջ և թիով խաղում եր հողի հետ... Բոլոր անկյուններից, ծածկված լուսամուտների հետեվից՝ հետևում ելին նրան... Խորամանկութունը ավելի քան հաջողեց: Տատյանային տեսնելով, Գերասիմը նախ րստ սովորության, սիրալիր մզողցով գլխով արավ, հետո լավ նայելով, թին գցեց, վեր թռավ տեղից, մոտեցավ Տատյանային, յերեսը մոտեցրեց նրա յերեսին... Տատյանան վախից ավելի ևս յերերաց ու աչքերը ծածկեց... Գերասիմը բռնեց նրա ձեռքը, վզեց բակի միջով և Տատյանայի հետ միասին մտնելով խորհրդի սենյակը, հրեց նրան զեպի Կապիտոնը: Տատյանան վախից քարացավ... Գերասիմը կանգնեց, նայեց նրան, թափ տվեց ձեռքը քմծիծաղ տվեց և ծանր քայլերով գնաց իր սենյակը: Մի ամբողջ որ նա դուրս չեկավ այնտեղից: Կառապան Անտիպիկան պատմում եր հետո, վոր ինքը դուռն ճեղքից տեսել ե, վոր իբր թե Գերասիմը՝ մահճակալին նստած և ձեռք այտին դրած՝ հանդարտ, յերբեմն միայն մզալով յերգում ե, այսինքն որսովում ե, աչքերը փակում և գլուխը թափահարում, ինչպես կառապան, յերբ յերգում ե իր աղիողորմ յերգը: Այդ տեսնելով՝ Անտիպիկան սարսափում ե և ճեղքից

հեռանում: Յերբ մյուս որր Գերասիմը դուրս չեկավ իր խցից՝ նրա վրա առանձին փոփոխութուն չեր նկատվում: Նա կարծես ավելի մտալիլ եր, և Տատյանայի ու Կապիտոնի վրա ամենափոքր իսկ ուշադրութուն չդարձրեց: Նույն այդ յերեկոյան նրանք ներկայացան տիրուհուն, և մի շաբաթ հետո պահվեցին: Հարսանիսի որր Գերասիմը իր վարքը վույ մի բանով չփոխեց. միայն գետից վերադարձավ առանց ջրի. ինչպես եր պատահել տակառը ճանապարհին կոտրել եր. իսկ գիշերը ախոռում նա այնպես յեռանդով մաքրեց ու թիմարեց իր ձին, վոր նա Գերասիմի յերկաթե բուռնցքների տակ դողդողում եր ու շուտ-շուտ հենվում այս կամ այն վտախ վրա:

Այս բոլորը կատարվեց գարնանը: Անցավ ելի մի տարի, վորի ընթացքում Կապիտոնը վերջնականապես շրջանից դուրս չեկավ վորպես միանգամայն անպետք մարդ, կնոջ հետ միասին սայլով ուղարկվեց հեռավոր մի գյուղ: Մեկնելու որը սկզբում նա շատ պարծենում եր և հավատացնում, թե ուր ել ուղարկեն իրեն, ինչն ելի չի կորչի, — բայց հետո տրամադրութունն ընկավ սկսեց գանգատվել, թե իրեն տանում են անկիրթ մարդկանց մոտ, և, վերջը այնպես թուլացավ, վոր մինչև իսկ սեփական գլխարկը չկարողացավ գլխին դնել: Յերբ ամեն ինչ պատրաստ եր արդեն և գյուղացիները յերասանները բռնած սպասում ելին միայն «բարի ճանապարհ» խոսքին, Գերասիմը դուրս չեկավ իր խցից, մոտեցավ Տատյանային և նվիրեց նրան, ի հիշատակ, մի կարմիր չիթ գլխաշոր, վոր մի տարի առաջ գնել եր նրա համար: Տատյանան, վոր մինչև այդ վայրկյանը գլխովն անցած բոլոր ճախորդութունները տարել եր միանգամայն անտարբերությամբ, այստեղ սակայն չըզիմացավ, աչքերը լցվեցին արցունքով և, սայլ նստելիս, յերեք անգամ համբուրվեց Գերասիմի հետ: Գերասիմն ուզում եր ուղեկցել նրան մինչև ուղեկալը (զաստավը) և





սկզբում գնում եր սայլի կողքից, բայց հանկարծ կանգ առաւ, ձեռքը թափ տվեց և գնաց դետի յերկարությամբ:

Իրիկնադեմ եր: Գերասիմը հանգիստ անցնում եր գետափով և նայում ջրին: Հանկարծ նկատեց, վոր մի ինչ վոր բան հենց ափի մոտ շարժվում ե տիղմի մեջ: Նա կուսացավ տեսավ մի փոքրիկ շան լակոտ՝ սև ու սպիտակ բծերով, վոր չնայած բոլոր ջանքներին, վոչ մի կերպ չեր կարողանում ջրից դուրս գալ. բարձրանում եր, սահում և դողդողում եր իր ամբողջ թաց մարմնով: Գերասիմը նայեց խեղճ շնիկին, հետո մի ձեռքով վերցրեց, կռնատակը դրեց նրան, և մեծ-մեծ քայլերով շտապեց տուն: Յերբ հասավ ու մտավ իր խուցը, փրկած շանը դրեց իր տախտի վրա, ծածկեց յուր հաստ վերնազգեստով, ապա նախ վազեց դուր ծղոտի, հետո խոհանոցը մի բաժակ կաթի: Վերադարձավ, վերարկուն գոուշությամբ վեր քաշեց, ծղոտը փռեց շան տակը ու կաթը դրեց տախտի վրա՝ նրա առաջ: Խեղճ շնիկը ընդամենը յերեք շաբաթական եր. աչքերը նոր բացվել էին, մի աչքը նույնիսկ փոքր ինչ մեծ եր թվում մյուսին: Բան լակել դեռ չեր կարողանում. դողում եր և աչքերը կուշ անում: Գերասիմը յերկու մատով բռնեց նրա գլուխը և դունչը մեկնեց կաթին: Փոքրիկ շունը հանկարծ սկսեց ազահաբար լակել կաթը և փնչացնել միաժամանակ: Գերասիմը նայում եր նրան, նայում և հանկարծ ծիծաղից թուլանում: Նա ամբողջ գիշեր քաշ յեկավ այդ փոքրիկ շան հետ. սրբեց, չորացրեց նրան, ծածկեց և, վերջապես քնեց նրա կողքին մի ուրախ ու խաղաղ քնով:

Վոչ մի մայր այնպես չեր խնամի իր յե եխային, ինչպես Գերասիմն եր խնամում իր շնիկը: Փոքրիկ շունն սկզբում շատ թույլ եր, նիհար ու տգեղ, բայց հետզհետե իրեն հավաքեց, լցվեց, խսկ ութ ամսեց հետո, շնորհիվ իր ազատարարի անխոնջ հոգատարության, դարձավ սպանա-

կան ցեղի մի լավ շուն՝ յերկար ականջներով, մազոտ խողովակաձեղ պոչով և արտահայտիչ խոշոր աչքերով: Նա զարմանալի կապված եր Գերասիմին և մի քայլ անգամ չեր հեռանում նրանից. բոլոր ժամանակ հետեվում եր նրան, պոչը շարունակ շարժելով: Գերասիմը նրա անունը դրեց Մուսու (համբերը գիտեն, վոր իրանց հանած ձայնը գրավում ե ուրիշներին ուշադրությունը): Տան մարդիկ բոլորն ել սիրեցին շանը և նույնպես Մուսու ելին կանչում նրան: Մուսուն անչափ խելոք եր. մոտենում, քննում եր բոլորին, բայց սիրում եր միայն Գերասիմին: Գերասիմն ինքը գժի պես սիրում եր նրան... ուստի նրան դուր չեր գալիս, վոր ուրիշները շոյում են իր շանը. վախենում եր, ինչ ե, հայտնի չե:

Գերասիմին առավոտները Մուսուն եր զարթեցնում՝ փեշից քաշելով, սանձից բռնած, սայլակի մոտ եր բերում ջրիկը ձիուն, վորի հետ լավ բարեկամ եր. դեմքին լըջություն տված՝ Գերասիմի հետ գնում եր գետը, հսկում եր նրա ավելներն ու թիբը և վոչ-վոքի մոտ չեր թողնում իր սիրոջ խցին: Գերասիմը նրա համար դուռն մեջ մի անցք եր շինել և Մուսուն կարծես գգում եր, վոր ինքը միայն Գերասիմի խցում ե լիակատար տեր ու այդ պատճառով, ներս մտնելուն պես, խսկույն ինքնագոհ դեմքով թռչում եր տախտին: Նա գիշերը բոլորովին չեր քնում, բայց և այնտեղ չեր հաջում, ինչպես վորևե հիմար մի շուն, վոր հետին թաթերին նստած, դունչը դեպի վեր, աչքերը փակ հաջում ե ձանձրույթից, այնպես, ասողերի վրա, և սովորաբար յերեք անգամ իրար յետեվից: Վոչ: Մուսուն այդպես չեր, նա իր բարակ ձայնը յերբեք իզուր տեղը չեր հանի:

Նա իր ձայնը հանում եր այն ժամանակ միայն, յերբ ոտար մի մարդ եր մոտենում իրենց պարսպին, կամ վորևե մի տեղ կասկածելի ազմուկ եր բարձրանում կամ շրջյուն... Մի խոսքով՝ Մուսուն յերեվելի պահակություն եր անում: Ծիշա ե, նրանից բացի՝ բակում կար և մի ծեր շղթայակապ



շուն, վորին, սակայն, յերբեք մինչև անգամ գիշերները, բաց չեյին թողնում, և ինքն ել զառամած լինելով՝ ազատութուն չեր ել պահանջում. իր համար կուշ յեկած, պառկում եր բնում և յերբեմն միայն լսեցնում եր իր խաչոտ հաշոցը, վորը իսկույն ել կտրում եր, կարծես ինքն ել զգալով, վ. ր դա անոգուտ ե: Մուսուկն տիրուհու տունը բոլորովին չեր մանում, և յերբ Գերասիմը վայտ եր տանում ներս, նա մնում եր դուրսը և սանդուխքի մոտ անհամբեր սպասում Գերասիմին՝ ականջները սրած, գլուխը բարձրացնելով մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ, նայած թե վոր կողմից եր գոների թիկոց լսվում:

Այդպես անցավ մի տարի ևս: Գերասիմը շարունակում եր դռնապանութունը և շատ գոհ եր իր վիճակից, յերբ հանկարծ մի անսպասելի դեպք պատահեց. . . Այն ե. գարնան մի գեղեցիկ օր տիրուհին իր տան ապրող ազգականուհիներին հետ անց ու գարձ եր անում հյուրասենյակում: Տրամադրութունը լավ եր, հանաքներ եր անում, ծիծաղում. հետի աղջիկներն ել ծիծաղում եյին և նույնպես հանաքներ անում, բայց առանձին ուրախութուն չեյին զգում. տանն այնքան ել ուրախ չեյին լինում, վոր տիրուհու վրա ուրախութուն եր գալիս, վորովհետև, ամենից առաջ, նա բոլորից պահանջում եր, վոր անկեղծորեն ու լիասիրտ մասնակցեն իր ուրախության, և յերկրորդ նրա այդ ուրախ բոպեները յերկար չեյին տեվում և, սովորաբար, փոխվում եյին մուսյլ ու կծու արամազրության:

Բազր ժպիտը շուրթերին՝ հյուրասենյակում զրոտնելով, տիրուհին մոտեցավ լուսամուտին:

Լուսամուտի առջև ծաղկանոց եր շինված, և հենց այդ բոպեյին ծաղկանոցի մեջ տեղը, վարդի թփի տակ, Մուսուկն պառկած՝ յեռանդով վոսկոր եր կրծում: Տիրուհին նկատեց նրան:

— Ահ,— բացականչեց նա հանկարծ,— սա ի՞նչ շուն ե: Ազգականուհին, վորին դիմեց տիրուհին, շփոթվեց և չիմացավ ինչ պատասխանի:

— Չը... ը... գիտեմ,— կմկմաց նա,— կարծես... Համբիսն ե... .

— Ահ,— ընդհատեց տիրուհին,— ի՞նչ սիրուն շնիկ ե, ասացեք այստեղ բերեն: Վաղո՞ւց ե նրա մոտ: Ի՞նչպես ե, վոր յես մինչև հիմա չեմ տեսել... Ասացեք բերեն:

Ազգականուհին իսկույն թռավ նախասենյակ:

— Տղա, այ տղա,— բացականչեց նա,— Մուսուկին, բերեք այստեղ: Շուտ: Մաղկանոցումն ե:

— Ի՞րա անունը Մուսուկն յե,— հարցրեց տիրուհին,— շատ լավ անուն ե:

— Այո շատ,— պատասխանեց ազգականուհին:— Շուտ, Մտեփան, շուտ:

Մտեփանը, մի յերիտասարդ, վոր սպասավորի պաշտոն ուներ, նեավեց ծաղկանոց և այն ե՝ քիչ եր մնացել բռներ Մուսուկին, բայց շունը ձարպկորեն դուրս պրծավ նրա մատների տակից և, պոչը ցցած վազեց Գերասիմի մոտ, վոր այդ ժամանակ խոհանոցի առաջ դատարկում եր ջրի տակառը: Մտեփանը վազեց նրա յետեվից և աշխատեց բռնել տիրոջ վոտների մոտ, բայց Մուսուկն շարունակ ծուլ եր լինում ու խաբս տալիս: Գերասիմը ժպտալով նայում եր այդ քաշկոտուքին: Յերկար բաշ գալուց հետո՝ Մտեփանը, վերջապես, գլուխը բարձրացրեց և նշաններով արագ հասկացրեց Գերասիմին, թե տիրուհին անա քու շունն ուզում ե, պիտի իր մոտ տանել: Գերասիմը մի քիչ զարմացավ, բայց կանչեց Մուսուկին, վերցրեց և տվեց Մտեփանին:

Մտեփանը բերեց նրան հյուրասենյակ և դրեց հատակին: Տիրուհին փաղաքշական ձայնով կանչեց նրան իր մոտ: Մուսուկն, վոր իր որում այդպիսի շքեղ սենյակում



չեր չեղած՝ վախեցաւ սաստիկ և նետվեց դեպի դռները։  
բայց Ստեփանի կողմից յետ մղվելով՝ դողողաց ու պա-  
տին կալավ։

— Մուսն, Մուսու արի ինձ մտա, արի տիրուհու մտա,  
—ասում էր տիրուհին.—արի, հիմար... մի վախի... արբի։

— Մտեցիր, Մուսու, մտեցիր խանութին, —ասում  
էին տիրուհուն. շրջապատող կանայք։ — Մտեցիր։

Բայց Մուսուն տխուր նայում էր շուրջը և տեղից  
չէր շարժվում։

— Մի բան բերեք, թող ուտի, —ասաց տիրուհին.—  
ինչ հիմարն է, խանութին չի մտանում։ Ինչից է վախենում։

— Դեռ չի ընտելացել, —ասաց կանացից մեկը ան-  
համարձակ։

Ստեփանը փոքրիկ պնակով կաթ բերեց և դրեց Մու-  
սույի առջև, բայց Մուսուն մինչև անգամ հոտ էլ չբաշեց.  
նա բոլոր ժամանակ դողում էր և առաջվա պես զիտում  
շուրջը։

— Ահ, ինչ հիմարն ես, —արտասանեց տիրուհին մո-  
տենալով և կռանալով, ուզեց շոյել նրան, բայց Մուսուն  
դողահար գլուխը թեքեց և ատամները չխկացրեց։

Տիրուհին ձեռքը հետ բաշեց արագ։

Մի ակնթարթ լուսթյուն տիրեց։ Մուսուն մի թույլ  
կլանչոց արձակեց, ասես ավստում էր արածի համար և  
ներողութուն խնդրում։

Տիրուհին հետ քաշվեց և հոնքերը կիտեց։ Շան հան-  
կարծակի շարժումը վախեցրեց նրան։

— Ախ, բացականչեցին շրջապատող կանայք բոլորը  
միասին.— խո՞ւ չկ՞եց (Մուսուն իր կյանքում չերբեք վոչ  
վոքի չէր կ՞ած). — ախ—ախ։

— Կորցրու դրան, —խոսեց պառավը փոխված ձայ-  
նով.— Չգվելի շուն։ Ի՞նչ կատաղածն է։

Յե՛վ դանդաղ շուռ չեկավ ու գնաց դեպի իր առանձնա-

սենյակը։ Ազգականուհիները վախով նայեցին իրար և ուզե-  
ցին հետեվել նրան, բայց տիրուհին կանգնեցրեց նրանց,  
սառը նայեց բոլորին ու արտասանեց. «Ո՛ւր եք գալիս  
վոր. ձեզ հո չեմ կանչում», և գնաց։

Կանայք հուսահատ ձեռները թափ ավին Ստեփանի  
վրա, Ստեփանը շանը բռնեց և գլեց դուրս, ուղիղ Գերա-  
սիմի փոսների մոտ։ Կես ժամ հետո արզեն տանը թագա-  
վորում էր մի խոր լուսթյուն. պառավ տիրուհին նստել  
էր իր բազմոցին փոթորկաբեր ամպից ել մտալ։

Մինչև յերեկո նրա տրամադրութունը վատ էր. վոչ-  
վոքի հետ չխոսեց, թուղթ չխաղաց և գիշերն անորեց վատ-  
Իսկ հետեվյալ օրը կանչեց իր մոտ սպասավորների պես  
Գավրիլին։

— Ասա, խնդրեմ, —սկսեց նա, —այդ ի՞նչ շուն էր, վոր  
ամբողջ գիշերը նաջում էր մեր բակում և չթողեց քնեմ։

— Շուն... վո՞րը... գուցե՞ խուլի շունը, —խոսեց Գավ-  
րիլը կովկարով։

— Չգիտեմ խուլի՞նն էր թե մի ուրիշինը, միայն չթո-  
ղեց վոր քնեմ։ Յես զարմանում եմ՝ այդքան շատ շներ  
ինչու համար են։ Հետաքրքիր է։ Չե՞ վոր մենք մեր բակում  
շուն ունենք։

— Ինչպես չէ, կա...

— Դե, ել ի՞նչ. ավելորդ շունը մեր ինչին է պետք։

Անկարգություններ է անելու միայն։ Նայող չկա, ավագ  
չկա.—այ թե ինչ, Յե՛վ խուլի ինչին է հարկավոր շունը։ Ո՞վ  
է նրան թույլ տվել, վոր իմ բակում շուն պահի։ Յերեկ  
մտեցա լուսամուտին, տեսնեմ դա ծաղկանոցում պառկած,  
ինչ-վոր կեղտոտ բան է բերել ու կրծում է. իսկ այնտեղ,  
չե՛ վոր վարդեր են տնկված։

Տիրուհին լուեց։

— Այտոր իսկ դրան չտեսնեմ... Լսում ես։

— Լսում եմ։

— Այտոր իսկ... Առ այժմ՝ գնա։

Գավրիլը դուրս յեկավ։



Նախասենյակում պառկած էր Ստեփանը. զարթեցրեց նրան և կամաց ինչ-վոր բան հրամայեց, վորին Ստեփանը պատասխանեց կես հորանջելով, կես ծիծաղելով: Գավրիլը գնաց, իսկ Ստեփանը վեր թռավ տեղից, կափտանն ու հողիկները հագավ և դուրս յեկավ՝ շեմքում կանգնեց: Չանցավ հինգ րոպե, Գերասիմը յերեվաց, իր անբաժան Մուժուլի ուղեկցութեամբ, փայտի մի անագին կապոց շարակին (տիրուհին հրամայել էր, վոր իր ննջարանն ու առանձնասենյակը տաքացնեն նույնիսկ ամառը): Գերասիմը հողբանց կանգնեց դռան առջև, ուսով հրեց այն և իր բեռովը մտավ ներս: Մուժուլն, ըստ սովորութեան, մնաց նրան սպասելու: Այդ ժամանակ Ստեփանը, հարմար բոլեցից ոգավելով, հարձակվեց հանկարծ նրա վրա, ինչպես ուրուրը ճուտի վրա, սեղմեց նրա կուրծքը գետնին, զրկեց և միտն անգամ գլխարկը չձածկելով՝ վազեվազ դուրս յեկավ բակից, նստեց առաջին պատահած կառքը և գնաց ուղիդ Ախսնի Ռյադը: Այստեղ նա գնորդ գտավ: Մուժուլին ծախեց հիսուն կոպեկի՝ այն պայմանով միայն, վորպեսզի նա մի շաբաթ գոնե կապած պահի նրան, և ինքն իսկույն վերադարձավ. բայց դեռ տուն չհասած՝ կառքից իջավ և, տան բոլորքը շրջան անելով, յետևյալ փողոցից, պարսպի վրայով թռավ բակը. դռնով վախենում էր գնալ, վոր Գերասիմին չհանգիպի:

Ասենք, նրա անհանգստությունն անտեղի յեր: Գերասիմը վաղուց բակում չեր: Տնից դուրս գալով՝ նա անմիջապես դես ու դեն ընկավ Մուժուլին վորոնելու. նա դեռ չեր հիշում, վոր Մուժուլն յերբեվիցե չսպասեր իր վերադարձին, ու այս ու այն կողմ ընկնելով՝ սկսեց փնտրել, կանչել նրան իրեն հատուկ ձայնով... վազեց իր խուցը, խոտանոցը, նետվեց փողոց—դես-դեն... Մուժուլն չկա, Մուժուլն կորել է: Գերասիմը զիմեց մարդկանց, ամենահուսահատ նշաններով հարց ու փորձ արավ, հողից կես արշին բարձր ցույց տալով՝ պատկերացրեց Մուժուլին

ձեռներով .. Ծառալողներից վոմանք, իսկապես չիմանալով ուր է չքացել Մուժուլն, գլուխները շարժում ելին միայն, մյուսները վոր զխտեյին, պատասխանի փխարեն ծիծաղում ելին, իսկ սպա ավորների ավագը ծանր ու մեծ կերպարանք ընդունելով սպեց բղավել կառապանների վրա: Այդ ժամանակ Գերասիմը դուրս յեկավ հայաթից:

Որը մթնում էր արդեն, չերբ նա վերադարձալ՝ նրա հոգնած տեսքից, անհաստատ քայլվածքից և փոշոտված շորերից կարելի չեր յենթադրել, վոր Մոսկվայի կեսը վոտի տակ է տվել. նա կանգնեց տիրուհու տան լուսամուտների դիմաց, աչք ածեց սանդուխքը, ուր յոթ ծառա էր հավաքված կանգնած, յետ դարձավ և մի անգամ ել կանչեց «Մուժուլ»: Մուժուլն չերևաց: Գերասիմը նորից հեռացավ: Բոլորը նայեցին նրա յետևից, բայց վոչ մեկը վոչ ժպտաց, վոչ ել մի խոսք ասավ: Իսկ հետևյալ առավոտ ամեն բանի հետաքրքիր ձիապահ Անտիպիկան խոհանոցում պատմում էր, վոր խուլն ամբողջ զիշերը հառաչել է:

Հետևյալ ամբողջ որը Գերասիմը չերևաց, այնպես, վոր նրա փոխարեն շրի գնաց կառապան Պատապը: Տիրուհին սպասավորների ավագ Գավրիլին հարցրեց, թե կատարված է արդյոք իր հրամանը: Գավրիլը պատասխանեց, վոր կատարված է: Մյուս առավոտ Գերասիմը իր խցից դուրս յեկավ աշխատանքի: Ճաշին յեկավ հաց կերավ և դ. րձյալ, գնաց առանց սրան կամ նրան գլուխ տալու: Նրա դեմքը, վոր առանց այն ել զուրկ էր կենդանությունից, ինչպես բոլոր խուլ ու համբերինը, այժմ կարծես քարացել էր: Ճաշից հետո նա կրկին դուրս յեկավ հայաթից, բայց կարճ ժամանակով. վերադարձավ և իսկույն գնաց խոհանոց:

Գիշերն իջավ, լուսնյակ, պայծառ մի զիշեր: Գերասիմը պառկած հառաչում էր և շարունակ շուռ ու մուռ գալիս անկողնում, մեկ ել հանկարծ զգաց, վոր իբր թե



փեշը քաշում են. նա ամբողջ մարմնով դողդողաց, բայց  
գլուխը չբարձրացրեց և միշտ անգամ աչքերը փակեց.  
բայց նորից անա փեշը քաշեցին՝ առաջվանից ավելի ուժ-  
գին: Գերասիմը վեր թռավ... Նրա առաջ՝ թուկի կտորը  
վզին կանգնած եր Մուսուսն ու պոչը շարժում եր շարունակ:

Յերկարածիգ մի ճիչ դուրս թռավ Գերասիմի անխոս  
կրծքից. նա բռնեց Մուսուսին ու սեղմեց կրծքին. Մու-  
սուսն մի ակնթարթում լիզեց նրա քիթը, աչքերը, բեղերը  
և միրուքը... Գերասիմը կանգնեց, մտածեց, զգուշութամբ  
դուրս յեկավ խոհանոցից, նայեց շուրջը և հավաստիանալով  
վոր իրեն վոչ վոր չի տեսնի՝ շտապեց իր խուցը: Դեռ ա-  
ռաջուց Գերասիմը գլխի յեր ընկել, վոր շունն ինքն իրեն  
չի կորել, վոր նրան տարել են, յերևի տիրուհու հրա-  
մանով. ծառայողները նշաններով բացատրել էյին նրան,  
թե ինչպես նրա Մուսուսն ուղեցել է խանումին կժի,  
ուստի և Գերասիմը վճռեց իր միջոցները ձեռք առնել:  
Ամենից առաջ նա Մուսուսին հաց տվեց, փայփայեց,  
պառկեցրեց ու ծածկեց, հետո սկսեց մտածել ու ամբողջ  
գիշերը մտածում եր, թե ինչպես անի, վոր Մուսուսին  
մի լավ տեղ թագցնի: Վերջապես, հնարը գտավ.— ամբողջ  
ցերեկը Մուսուսին կթողնի խցի մեջ և յերբեմն միայն  
կգա տեսնելու, գիշերը կտանի դուրս: Դուան անցքը նա  
պինդ խցեց իր հին վերարկույով և ինքը, յուսը նոր  
բացված, բակուսն եր արդեն, կարծես վոչինչ էլ չեր  
պատահել. նա պահպանել եր նույնիսկ (անմեղ խորա-  
մանկութուն) իր դեմքի տխուր արտահայտութունը: Խեղճ  
խուլի մտքով չեր էլ կարող անցնել, վոր Մուսուսն իր  
կլանչոցով կմաննի իրեն: Յեվ, իսկապես, շուտով տան  
մարդիկ բոլորն էլ իմացան, վոր համրի շունը վերադառ-  
ձել է և ալժամ տանը փակված է: Բայց Գերասիմին ու  
շանը խզճալուց, մասամբ էլ գուցե Գերասիմի յերկյուղից,  
զգացնել ավին նրան, վոր իրենք նրա գաղտնիքը իմացել

են: Սպասավորների ավագը ծոծրակը քորեց միայն և ձեռք  
թափ տվեց. «Շ'հ, աստված իր հետ: Գուցե խանումը չի յեղ  
իմանում»: Իսկ համրը յերբեք այնպիսի ջանասիրություն  
չեր ցուց տվել, ինչպես այդ որը. նա սրբեց, մաքրեց  
ամբողջ բակը, խոտերը արմատահան արավ, ծաղկանոցի  
ցանկի փայտերը կարգի բերեց,— մի խոսքով աշխատում,  
չարչարվում եր այնպես, վոր մինչև անգամ տիրուհին էլ  
ուշադրութուն դարձրեց նրա ջանասիրության վրա: Որվա  
ընթացքում Գերասիմը մի յերկու անգամ թագուն գնաց  
փակված շանը տեսնելու, իսկ գիշերը նա Մուսուսի հետ  
միասին պառկեց, վոչ թե խոտանոցում, այլ խցում և  
միայն ժամը յերկուսին դուրս յեկավ նրա հետ մաքուր ողում  
զբոսնելու: Ու բակում բավական յերկար զբոսնելով՝ նա  
ուղում եր վերադառնալ արդեն, յերբ տան պարսպի այն  
կողմը, նրբափողոցում ինչ-վոր խշխշոց լավեց: Մուսուսն  
ականջները սրեց, մոռաց, մտեցավ պարսպի պատին,  
հոտոտեց և սկսեց բարձրաձայն հաջել: Ինչ-վոր հարբած  
մի մարդ յեկել եր այնտեղ գիշերելու:

Այդ ժամանակ տիրուհին հենց նոր աչքը կայցրել եր  
յերկարատև «Ղգային հուզումից» հետո. այդպիսի հուզումներ  
միշտ պատահում էյին նրան չափազանց կուշտ ընթրիքից  
հետո: Շան հանկարծակի հաջոցը զարթեցրեց նրան. նրա  
սրտի զարկերն ավելացան. «Աղջիկներ, աղջիկներ,— նվա-  
ղելով կանչեց նա,— աղջիկներ»: Աղջիկները վախվորած  
ներս մտան ննջարան: «Ո՛ր, ո՛ր, մեռնում եմ, — խոսեց  
տիրուհին վշտահար, ձեռքերն այս ու այն կողմ տարա-  
ծելով.— Դարձյալ, դարձյալ այդ շունը... Ո՛ր, մարդ ուղար-  
կեցեք բժշկի հետևից. դրանք ինձ ուղում են սպանել... Շունը,  
դարձյալ այդ շունը: Ո՛ր» և նա գլուխը յետ ձգեց, վոր  
նշան եր ուշաթափության: Վաղեցին բժշկի յետևից:  
Նա յեկավ տիրուհուն ուշթի բերեց և հետո, հանգստու-  
թյան համար, կաթիլներ տվեց: Տիրուհին ընդունեց կա-



Թիւները և անմիջապէս արտասովխառն ձայնով սկսեց  
զանգատվել շանից, ծառայողների ավագ Գավրիլից, իբր  
բախտից և այն բանից, վոր իրեն՝ խեղճ, պառավ կնոջը  
բոլորն աչքաթող են արել, վոր վոչ-վոք իրեն չի խղճում  
և բոլորն ել իր մահն են ցանկանում: Մինչ այդ՝ Մու-  
մունն շարունակում էր հաջել, իսկ Գերասիմն ապարդշուն  
կանչում էր նրան պարսպի մոտից: «Ահա... անա... զար-  
ձյալ...» — խոսեց տիրուհին, և նրա աչքերը նորից կուլ  
զնացին: Բժիշկը ինչ-վոր բան շնչաց աղջկան, նա վա-  
զեց նարասենյակի, զարթեցրեց Ստեփանին, իսկ Ստեփա-  
նը վազեց Գավրիլին զարթեցնի, և Գավրիլը բորբոքված  
հրամայեց տան բոլոր ծառայողներին վտալի հաներ:

Գերասիմը յետ նայեց, լուսամուտներում տեսավ լույս  
ու ստվերներ, նրա սիրտը վատ բան զգաց, Մումունին  
թեև տակ առավ, վազեց մտավ իր խուցը և դուռը փա-  
կեց: Մի քանի րոպե հետո հինգ մարդ ուզում էին բա-  
նալ նրա դուռը, բայց նիգերի զիմադրությանը հանդիպե-  
լով՝ կանգ առան: Յեկավ Գավրիլը սաստիկ հեվալով և  
բոլորին հրամայեց մինչև առավոտ մնալ այդտեղ ու հսկել,  
իսկ ինքը շտապեց սպասավոր աղջկերանց սենյակը և  
նրանց գլխավորի՝ Լյուբով Լյուբիմովնայի միջոցով հրա-  
մայեց հայտնել տիրուհուն, վոր շունը դժբախտաբար,  
նորից ինչ-վոր տեղից յետ և յեկել, վոր վաղն և յեթ նա  
կենդանի չի լինի և տիրուհին թող վողորմած լինի՝ չբար-  
կանա ու հանդիստ մնա: Տիրուհին, հավանորեն այնքան  
ել շուտ չեր հանգստանա, յեթե բժիշկը տասյերկու կա-  
թիլի փոխարեն քառասուն չտար, այդ աղջեց նրան և  
քառորդ ժամից արդեն նա քնած էր խոր ու խաղաղ ըը-  
նով: իսկ Գերասիմը, ամբողջովին գունատ, պառկել էր  
իր մահճկալին և Մումունի բերանը պինդ սեղմել:

Հետեյալ առավոտ տիրուհին զարթնեց բավական ուշ:  
Գավրիլն սպասում էր նրա զարթնելուն, վորպեսզի Գե-

րասիմի տան վրա հարձակվելու հրաման տա, իսկ ինքը  
պատրաստվում էր տիրուհու հանդիմանություններն ու  
նախատինքը լսելու: Բայց վոչինչ ել չեղավ: Անկողնում  
պառկած տիրուհին հրամայեց իր մոտ կանչել աղջիկնե-  
րից մեկին:

— Լյուբով Լյուբիմովնա, — սկսեց հանգրառ ու թույլ  
ձայնով. (տիրում էր նա յերբեմն հալածված ու վորբացած  
թշվառ ձևանալ. ել ինչ ասել կուզի, վոր այդ ժամանակ  
տան բոլոր մարդիկ իրենց անհարմար էյին զգում).  
Լյուբով Լյուբիմովնա, տեսնում եք ինչ գրության մեջ եմ՝  
զնացեք, հողիս, Գավրիլ Անդրեյիչի մոտ, խոսեք նրա հետ,  
միթե մի շուն նրա համար ավելի թանգ է իր տիրուհու  
հանգստությունից ու կյանքից: Յես չեյի կամենա այդ  
բանին հավատալ, — ավելացրեց նա խորապես հուզված. —  
զնացեք, հողիս, բարի չեղեք, զնացեք Գավրիլ Անդրեյիչի  
մոտ:

Լյուբով Լյուբիմովնան զնաց Գավրիլի սենյակը: Հայտ-  
նի չե թե ինչ խոսք ու զրույց յեղավ նրանց մեջ, բայց  
մի քիչ անց մարդկանց մի ահագին ամբոխ բակի միջով  
շարժվեց դեպի Գերասիմի խուցը: Առջևից գնում էր Գավ-  
րիլը, նրա յերկու կողմից սպասավորներն ու խոհարար-  
ները: Լուսամուտից նայում էր քեռի Խվոստը և կարգա-  
դրություններ անում, այսինքն ձեռքերը շարժում էր մի-  
այն: Ամենքի յետևից, թուչկոտելով ու ծամածռություններ  
անելով, գնում էյին փոքրիկ տղաներ, վորոնց մի մասը  
յեկել էր հարևան բակից: Գերասիմի խուցը տանող սան-  
դուխքին նստել էր մի պահակ, դռների մոտ կանգնել է-  
յին յերկուսը՝ փայտավորված: Սկսեցին սանդուխքով բար-  
ձրանալ, ու բռնեցին նրա ամբողջ յերկարությունը: Գավ-  
րիլը մոտեցավ դռանը, բռունցքով ձեռեց ու կանչեց:

— Բայց:

Լսվեց խեղդված հաշոց, բայց պատասխան չեղավ:



— Ասում եմ՝ բաց,— կրկնեց նա.

— Ախր, Գավրիլ Անդրեյիչ, — նկատեց ներքևից Ստեփանը, — չե՞ վոր խուլ ե, չի լսում:

Ամենքը ծիծաղեցին:

— Հապա ի՞նչ անեք, — ասավ վերևից Գավրիլը:

— Այդտեղ դռան վրա ծակ տեղ կա, — պատասխանեց Ստեփանը, — փայտով շարժեցեք ենպես:

Գավրիլը կռացավ:

— Նա ծակը ինչ-վոր վերարկու յե կոխել:

— Դուք ել վերարկուն զեպի ներս բռնեցեք:

Նորից խուլ հաճոց լսվեց:

— Տես, տես, ինքն իրեն մատնում ե, — նկատեցին ամբողջ միջից և նորից ծիծաղեցին:

Գավրիլը ականջի յետևը քորեց:

— Չե, ախպեր, — ասավ նա վերջապես, — վերարկուն բռնիր ինքդ, յեթե ուզում ես:

— Լավ, համեցեք:

Յեվ Ստեփանը բարձրացավ վերև — փայտը վերցրեց, վերարկուն հրեց ներս ու սկսեց փայտը ծակի մեջ խաղացնելով՝ կրկնել՝ «դուրս արի, դուրս արի»: Նա դեռ փայտը տարուբերում եր, յերբ հանկարծ խուլի դուռը արագ բացվեց, սպասավորների ամբողջ խումբը գլխիվայր գլորվեց սանդուխքից, և ամենից առաջ Գավրիլը:

— Դե, զե, զե, — կանչեց Գավրիլը ներքևից. — խելո՞ք կաց, այ...

Գերասիմն անշարժ կանգնեց շեմբում: Ամբողջը հավաքվեց սանդուխքի վտոնների մոտ: Գերասիմը՝ պերմանական կափտան հագած այդ մանր մարդկանց նայում եր բարձրից, ձեռները թեթևակի կողքին կանթած: Իր գլուղական կարմիր վերնաշապիկով նա մի հսկա յեր թվում նրանց առաջ:

Գավրիլը մի բալլ արավ առաջ գնալու:

— Տես, այ, — ասավ նա, — չարություն մի անի:

Յեվ սկսեց նշաններով հասկացնել, վոր տիրուհին նրա շունը պահանջում ե անպատճառ, տուր այդ շունը խկուհն, յեթե վոչ վատ կլինի:

Գերասիմը նայեց նրան, ցույց տվեց շունը, ձեռքը տարավ-բերեց իր վզի մոտ այնպես, կարծես ողակ եր գրցում ու հարցական դեմքով նայեց ծառայողներին ավագին:

— Այո, այո, — ասավ Գավրիլը գլուխը շարժելով, — անպատճառ:

Գերասիմն աչքերը ցած դցեց, հետո հանկարծ ցնցվեց, կրկին ցույց տվեց Մուսուլյին (վոր բոլոր այդ ժամանակը նրա մոտ կանգնած, պոչը շարժում եր անմեղ և ականջները խլշում), նորից իր վզի վրա խեղդելու նշան ցույց տվեց և նշանակալից ձևով ձեռը խփեց կրծքին, վորով կարծես հայտարարում եր, վոր ինքն իր վրա յեր վերցնում Մուսուլյին վոչնչացնելու գործը:

— Չե, դու կխարես, — շարժեց ձեռը Գավրիլը իբրեւ պատասխան:

Գերասիմը նայեց նրան, արհամարանքով ծիծաղեց, կրկին ձեռքը կրծքին խփեց և դուռը չրխկոցով փակեց: Բոլորը լուռ իրար նայեցին:

— Սա ի՞նչ ե նշանակում, — սկսեց Գավրիլը, — նորից փակվեց:

— Թողեք, Գավրիլ Անդրեյիչ, — ասավ Ստեփանը. — նա ասածը կանի, յեթե խոստանում ե: Նրա բնավորությունն եզպես ե: Յեթե խոստանում ե՝ ել պրծավ: Եղ բանում նա մեղ նման չի, ինչ վոր ճիշտ ե, ճիշտ ե: Այո:

— Եհ, գուցե, տեսներ, — ասավ Գավրիլը. — իսկ մեկը թող ելի մնա դարաուլ: Յեկ, Յերոշկա, — ավելացրեց նա, դիմելով մի ինչ վոր խեղճ մարդու, վոր այդեպան եր համարվում. — մի բան վոր գործ չունես, փայտը վերցրու և այստեղ նստիր, հենց վոր մի բան յեղավ՝ խկուհն վագիր իմ կուշտը:



Յերոշկան փայտը վերցրեց և նստեց սանդուխքի առաջին աստիճանին: Ամբոխը ցրվեց, բացի մի քանի հեռաքրքրներէից ու փոքրիկ տղաներէից, իսկ Գավրիլը վերադարձավ տուն և հրամայեց աղջկերանց միջոցով հայտնել տիրուհուն, վոր ամեն ինչ կատարված է:

Այդ իրարանցումից մի ժամ հետո խուցի դուռը բացվեց և Գերասիմը դուրս յեկավ. նա հագել էր իր տոնական կաֆասանը: Նա իր հետ դուրս բերեց Մուսուլիին՝ վիզը թոկ գրած: Յերոշկան մի կողմ քաշվեց և նրան ճանապարհ տվեց անցնելու: Գերասիմը գնաց զեպի բակի դուռը: Բակում յեղած փոքրիկ տղաները լուռ աչքերով հետեւեցին նրան: Գերասիմը նույնիսկ յետ չնայեց, գլխարկը ծածկեց միայն փողոցում: Գավրիլը նույն Յերոշկային ուղարկեց նրա յետեւից նայելու: Յերոշկան հեռվից տեսնելով, վոր Գերասիմը շան հետ միասին ճաշարան մտավ, սպասեց նրա դուրս գալուն:

Ճաշարանում Գերասիմին ճանաչում և նրա նշանները հասկանում էին: Նա իր համար մտով կերակուր ընդրեց և նստեց՝ արմունկներով սեղանին հենված: Մուսուլն նրա աթոռի մոտ կանգնած՝ խելացի աչքերով նայում էր նրան նրա մազերը լավ հարթված էին. յերեվում էր, վոր քիչ առաջ սանրել էն նրան: Գերասիմին կերակուր բերին: Նա հաց փրթեց նրա մեջ, միսը կտոր-կտոր արավ և ափսեն գրեց հատակին: Մուսուլն սկսեց ուտել իր սովորական բարեկիրթ ձևով, դունչը հագիվ կերակրին մոտեցնելով: Գերասիմը յերկար նայում էր նրան, հանկարծ արցունքի յերկու խոշոր կաթիլ ընկան նրա աչքերից. մեկն ընկավ շան թեք ճակատին, մյուսը՝ կերակրի մեջ: Նա դեմքը ծածկեց ձեռքերով: Մուսուլն կերավ կերակրի կեսը և մի կողմ քաշվեց դունչը լիզելով: Գերասիմը յելավ տեղից, վճարեց կերակրի գինը և դուրս յեկավ: Յերոշկան, Գերասիմին տեսնելով, ցատկեց անկյունի մյուս կողմը և յերբ Գերասիմն յեկավ անցավ իր մոտով, նա կրկին հետեւեց նրան:

Գերասիմը գնում էր առանց շտապելու, Մուսուլի թոկը բռնած: Հասնելով փողոցի անկյունը՝ նա կանգ առավ կարծես մտածմունքի մեջ, և հանկարծ արագ քայլերով դիմեց զեպի գետը: Ճանապարհին նա մտավ նոր կառուցվող մի տան բակ և այնտեղից յերկու աղյուս բերեց կենտակը գրած: Հասնելով գետը, նա ափով գնաց-հասավ մի տեղ, ուր ցցերին կապված յերկու նավակ էին կանգնած. նա Մուսուլի հետ միասին ցատկեց դրանցից մեկի մեջ: Բանջարանոցի ծայրում խփված վրանից դուրս յեկավ մի կաղ ծերուկ և պոռաց նրա վրա: Բայց Գերասիմը գլխով արեց միայն և այնպես ուժեղ թիավարել սկսեց, վոր թեև գետի հոսանքին հակառակ, մի ակնթարթում հարցուր ստեին առաջ սլացավ: Ծերուկը կանգնեց, կանգնեց, մեջքը քորեց նախ ձախ, ապա աջ ձեռքով և կաղալով վերադարձավ նորից իր վրանը:

Գերասիմը շարունակ թիավարում էր ու թիավարում: Ահա Մոսկվան յետ մնաց: Ահա գետի ափերին տարածվում են մարգագետիններ, բանջարանոցներ, դաշտեր, պուրակներ, յերեվացին խրճիթներ: Գյուղի հոտ է գալիս: Գերասիմը թիերը ձգեց, գլուխը սեղմեց Մուսուլին, վոր նստած էր նրա առջև՝ չոր տախտակի վրա—հատակը լցված էր ջրով—և այդպես մնաց անշարժ, ուժեղ բազուկներով շան մեջքը դրկած: Իսկ նավակը մինչ այդ ալիքներով կամաց-կամաց տարվում էր յետ՝ զեպի քաղաք: Վերջապես, Գերասիմն ուղղվեց արագ և ինչ-վոր ցավագին մի կատաղու թյուն դեմքին, վերցրած ազուսները թոկով կապեց իրար, հետո թոկի ծայրերը կապեց Մուսուլի վիզը. բարձրացրեց ու բռնեց նրան գետի վրա ու վերջին անգամ նայեց նրան... Մուսուլն հավատով ու անյերկուղ նայեց տիրոջը և պոչը շարժեց կամացուկ: Գերասիմը յերեսը շուտ տվեց, աչքերը փակեց և ձեռները բաց թողեց... ու—չսեց վոչինչ—վոչ ընկնող Մուսուլի սուր կլանչոցը, վոչ էլ ջրի



ծանր ճողփուներ, ամենաաղմկոտ որը լուռ և անշշուկ եր  
նրա համար, ինչպես վոչ մի խաղաղ գիշեր անձայն չե մեզ  
համար. և յերբ նա աչքերը բաց արավ նորից, առաջվա  
պես գետի յերեսով, կարծես միմյանց հալածելով, շաա-  
պով վազում եյին փոքրիկ ալիքները և առաջվա պես ճող-  
փյունով զարնվում նավակի կողերին, և միայն հեռուն, դե-  
պի ափն եյին վազում ինչ-վոր լայն կորագծեր:

Յերոշկան, հենց վոր Գերասիմը թագնվեց նրա աչքից,  
վերադարձավ առն և պատմեց ինչ տեսել եր:

— Դե, իհարկե,—նկատեց Ստեփանը.—Գերասիմը  
նրան շուրը կձգի: Արդեն կարող եք հանգիստ լինել, քանի  
վոր խոստացել եր...

Ամբողջ որը Գերասիմը չերեվաց: Նա ճաշվա հացին  
չեկավ: Յերեկոյան եր, յերբ բոլորը հավաքվեցին ընթրիքի,  
նա չկար:

— Ի՞նչ գարմանալի տղա յե այդ Գերասիմը,—խոսեց  
հասուլիկ լվացարարուհին իր նման ճղճղալով,—միթե  
կարելի չե մի շան համար եղպես գնալ ման գալ... Չեմ  
հասկանում...

— Ախր Գերասիմն ետեղ եր,—գոչեց հանկարծ Ստե-  
փանը, գդալով իր համար քաշովի վերցնելով:

— Ի՞նչպես: Յերբ:

— Յերկու սահաթ առաջ: Ինչպես չե. փողոցի դռան  
մոտ պատահեցինք: Նա ետեղից եր գնում, հայաթից նոր  
եր գուրս գալի: Ուզեցի շան մասին հարցնեմ—քեֆը տեղը չեր:  
Ինձ ել բոթեց. ինչպես յերևում ե՛ ուզում եր ասել—հե-  
տև, մի խոսի, ու մի ենպես դմբուզ հասցրեց վզկոթիս,  
վոր—նյ, նյ, ոյ... Յեվ Ստեփանն ահամա քմծիծաղով կուչ  
յեկավ ու վիզը քորեց:

Բոլորը ծիծաղեցին Ստեփանի վրա և ընթրիքից հե-  
տ գնացին քնելու:

Մինչդեռ նույն այդ ժամանակ Տ-ի խճուղով շտապով

և առանց կանգ առնելու քայլում եր մի ինչ-վոր հսկա՝  
պարկը մեջքին ու մի յերկար ձեռնափայտ ձեռին: Դա  
Գերասիմն եր: Նա գնում եր առանց յետ նայելու, շտապում  
եր առն, իրենց գյուղը: Խեղճ Մուսուլին շուրը գցելուց  
հետո՝ նա վազեց իր խուցը, հապճեպ մի քանի բան-ման  
հավաքեց դրեց հին սապճակի մեջ, կապոց արավ, ուսը  
պցեց ու հայդա: Ճանապարհը նա լավ գիտեր, դեռ այն  
ժամանակից, յերբ իրեն բերին Մուսկվա: Այն գյուղը, վոր-  
տեղից ախրուհին բերել եր նրան—ընկած եր խճուղուց  
քանոնահինգ վերստ հեռու: Նա գնում եր մի անընկճելի  
խիզախությամբ, կատաղի և ուրախ վճռականությամբ: Գը-  
նում եր, ու նրա աչքերն ազահաբար և ուղիղ նայում  
եյին առաջ: Նա շտապում եր այնպես, կարծես պատավ  
մայրը սպասում եր նրան հայրենի գյուղում, կարծես կանչել  
եր իր մոտ ոտար յերկրում և ոտար մարդկանց մեջ յերկար  
թափառելուց հետո... Հենց նոր իջած ամառային գիշերը  
խաղաղ եր ու տաք. մի կողմից, այնտեղ, ուր արևը մայր  
մտավ, յերկինքը դեռ սպիտակին եր տալիս և թեթևակի  
կարմրած եր անհետացող որվա վերջին ցողքերով, մյուս  
կողմից բարձրանում եր գորշ-կապույտ աղջամուղջը: Հա-  
րյուրավոր լորեր ադմկում եյին ամեն կողմ, և նրանց հեռ  
մրցելու համար կարծես ջրհավերը ձայնակցում եյին իրար:  
Գերասիմը, սակայն, նրան լսել չեր կարող. նա չեր  
կարող լսել նաև գիշերային մեղմ սոսախյունը ծառերի,  
վորոնց կողքով անցնում եր. բայց նա զգում եր հասնող  
հաճարի ծանոթ հոտը, վոր բուրում եր շարունակ մութ  
դաշտերից, զգում եր, թե ինչպես քամին, իր հայրենիլ  
քամին, քնքշաբար զարնվում եր իր յերեսին և խաղում  
մազերի ու միրուքի հետ. տեսնում եր իր առաջ սպիտա-  
կին տվող ճանապարհ, իրանց տան ճանապարհը, վոր ձրգ-  
վում եր նետի պես ուղիղ. նա տեսնում եր յերկինքում  
անթիվ աստղեր, վոր լուսավորում եյին նրա ուղին, և



առյուծի նման քալում էր նա առույգ ու կայտառ,  
աֆնպես, վոր յերբ ծագող արեգակը իր տամուկ կարմիր  
շողերով լուսավորեց մեծ քայլերով հեռացող հսկային—  
Մոսկվայի և նրա միջև ընկած էր արդեն յերեսունուհինգ  
վերստ...

Յերկու որից հետո նա իր տանն էր արդեն, ի մեծ  
զարմանս այն զինվորի կնոջ, վորին տեղավորել էյին  
նրա խրճիթում: Սրբապատկերի առաջ աղոթելուց հետո՝  
նա գնաց տանուտերի մոտ: Տանուտերը մի քիչ զարմա-  
ցավ. բայց խոտհունձը հենց նոր սկսել էր. Գերասիմին  
վորպես ընտիր մշակի, հենց այդտեղ ձեռը գերանդի տվին,  
և նա առաջվա պես գնաց հունձ անելու, այնպես, վոր  
գյուղացիները նախանձում էյին միայն, տեսնելով նրա  
ձեռի թափն ու հնձած լասերը...

Իսկ Մոսկվայում, Գերասիմի փախչելու հետեյալ որը,  
տան սպասավորները զբաղվեցին նրանով: Գնացին նրա  
խուցը, ման լեկան, հետո հայտնեցին Գավրիլին: Նա յե-  
կավ նայեց, ուսերը վեր քաշեց, և վճռեց, վոր համըրը կամ  
փախել է, կամ խեղդվել իր շան հետ միասին: Իմաց տվին  
վոստիկանության, հայտնեցին տիրուհուն: Տիրուհին բար-  
կացավ, լաց յեղավ և հրամայեց, ինչ էլ լինի գտնել նը-  
րան. հավատացրեց, վոր ինքը յերբեք չի հրամայել շանը  
վոչնչացնել և, վերջապես, այնպես մի շշպրեց Գավրիլին,  
վոր նա ամբողջ որը գլուխը շարժում էր և ասում. «Հրմ» ...

Վերջապես, գյուղից լուր յեկավ, թե Գերասիմն այն-  
տեղ է: Տիրուհին մի քիչ հանգստացավ. սկզբում ուզում  
էր հրամայել, վոր նրան ամիջապես յեա բերեն Մոսկվա,  
բայց հետո հայտնեց, վոր այդ տեսակ ապերախտ մարդը  
իրեն սկի հարկավոր չէ: Ասենք, դրանից հետո նա ինքը  
շուտով մեռավ, իսկ ժառանգների բան ու գործը Գերա-  
սիմը չեր. նրանք մոր մնացած ծառայողներին էլ բաց  
թողին:

Յեվ մինչև այսօր էլ Գերասիմն ապրում է մեն-մե-  
նակ իր մենավոր խրճիթում. նա առողջ և ուժեղ է առաջ-  
վա պես, մենակ չորս մարդու բան է անում ու առաջվա  
պես էլի լուրջ ու ծանր է: Բայց հարևանները նկատել են,  
վոր նա, Մոսկվայից վերադառնալուց հետո, վոչ մի շուն  
չի պահում մոտը:

«Ասենք, — խոսում են գյուղացիները, — շունը նրա  
խնչին է պետք. գողին զուով էլ չէս կարող տանել նրա  
գուորը»:

Այս համբավն է պատում համրի հսկա ուժի մասին:





Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավիլիտի լիազոր՝ Ձ-1054, Հրատ. 4446.

Պատվեր 2. Տիրած 5000.

Թուղթ 62×94. Տպագրական 2<sup>1</sup>/<sub>2</sub> մամ.

Մեկ մամուլում 24480. նշան.

Հանձնված է արտադրության 2 հունվարի 1940 թ.

Ստորագրված է տպագր. համար 27 հունվարի 1940 թ.

---

Հայպետհրատի I տպարան, Յերեվան, Լենինի փ. 65.



ՀՀ Ազգային գրադարան



NL0391363



ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

5507

96 14 -

И. С. ТУРГЕНЕВ  
МУМУ  
Гиз Арм. ССР Ереван